Օգտուելով այն հանգամանքից, որ մահմեդական ազգաբնակութիւնը անզօր էր իր ձայնը լսելի դարձնելու արևմտեան աշխարհին՝ դաշնակները ամբողջ երկու տարի շարունակեցին իրենց աւերման գործը: Երևանի Մահմեդական Միութեան կազմած պաշտօնական վիճակագրութիւնների համաձայն, որ հաղորդագրուած են և դաշնակից պետութիւնների Կովկասի և Պոլսի ներկայացուցիչներին, — այդ փաստաթղթերը տակաւին պիտի դտնեն նրանց «գործ»-երի մէջ — մինչև 1919թ. վերջը միայն Հայաստանը կազմող գաւառներում այրուել են 199 թրքական գիւղեր և նրանց 135,000-ի հասնող բնակիչները բնաջնջուել են մեծ մասամբ և միայն մի փոքր մասին է յաջողուել ապաստան գտնել Ազրբէջանում, ուր Բաղուի մուսաւաթական Խորհրդարանը 260 միլիոն ռուբլի վարկ է քէսարկել նրանց կերակրելու համար: Այդ գումարը կարող է որոշ գաղափար տալ դաշնակցական վայրագութեան զոհերի թիւ և թշուառութեան մասին:

Դաշնակները չբաւականացան այդ բնաջնջումը կատարելով Հանրապետութեան սահմաններից ներս. հայկական հրոսախմբերը թափանցեցին Ազրբէջան և Ղարաբաղի գաւառում այրեցին մօտ 50 թուրք գիւղեր՝ կոտորելով ամբողջ ազգաբնակութիւնը: Այդ ոճիրները պաշտօնապէս հաղորդուեցին բոլոր դաշնակից պետութիւններին՝ Ազրբէջանի կառավարութեան կողմից:

Այդ հետևողական բնաջնջման ծրագիրը գործադրուեց նաև Հանրապետութիւնից հարաւ գտնուող շրջաններում: Ցայտարարելով ինքնորոշման իրաւունքը, որ դաշնակից պետութիւնները իրականութեան մէջ միայն իրենց պաշտպանեալներին են թոյլ տալիս, Կարսի շրջանում ապրող թուրքերը մերժեցին ընդունել հայկական տիրապետութիւնը: Զօրավար Սրամեանը(*) անցեալ տարի հրատարակել տուեց մի վերջնագիր՝ հրաւիրելով նրանց 24 ժամուայ ընթացքում ընդունել այդ տիրապետութիւնը: Սրդ՝ նախքան գիւղերի մեծ մասը այդ որոշման ծանօթանալու՝ տեղեկատուութեան միջոցների պակասութեան պատճառով՝ նիւթական ժամանակ ունենալը, հայերը թնդանօթային հարուածներով հրդեհեցին ու քանդեցին այդ գիւղերից մօտ 40-ը:

Շնորհիւ այն դէնքերի ու ռազմամթերքի, որ Ամերիկայի և Եւրոպայի իմպերիալիստները քրիստոնէութեան անունով առատօրէն տալիս են դաշնակներին, այս վերջինները կարողացան կոտորածներն ու թալանները ծաւալել մինչև օսմանեան սահմանները, և մեր ցեղակից ու կրօնակից եղբայրները սկսեցին հազարներով փախչել դէպի մեր երկիրը: Մեր սահմանագլխային գաւառների բնակիչները՝ յուզուած ու վրդովուած այդքան ոճիրներից՝ մի քանի ամիս առաջ արդէն որոշել էին օգնութեան հասնել իրենց եղբայրներին և միայն կառավարութեան ձեռք առած միջոցներն էին, որ այն ժամանակ արգելեցին թիւրք միլի ուժերին խիստ դաս տալ հայ հրոսախմբերին: Բայց սրանք՝ իրենց գործը լրացնելով սահմանի այն կողմը՝ յանդգնութիւնը ունեցան անցնելու օսմանեան սահմանը և գործադրել իրենց աւերման ձևերը՝ այն նպատակով, որ նախագահ Վիլսընի որոշումներին ապասելով՝ ստեղծեն կատարուած փաստ: Սեպտ. 24-ին մեր սահմանագլխային գիւղերը, յանկարծ, յարձակում կրեցին. մեր զօրքերը թշնամուն յաղթելուց յետոյ՝ յաղթականօրէն հետապնդեցին նրանց Սարըղամիշի շրջանում, որ բնակեցուած է բացառապէս թուրքերով: Մեր ձեռքն ընկած փաստաթղթերը ապացուցում են, որ հայկական յարձակումը նախապատրաստուած է եղել մեծ խնամքով և նպատակ է ունեցել Էրզրումի գրաւումը: